

անասն՝ մամուլի օգնութեամբ փաստակար հետազոտութիւններ էր անուամբ Աւրեմն հասարակութիւնը ազատելու համար պէտք է ժողովրդին նորից քրիստոնեայ դարձնել, զարթոցնելով նրա ջերմ հաւատը, որ կարելի է միայն եկեղեցու ոյժի օգնութեամբ՝ Այսպէս է արիւսօտրիւնների պահպանողական նախագիծը: Ինչպէս տեսնում էք, այդ պահպանողականութիւնը հիւսիսային, Կոստանի պահպանողականութիւնն է, որի նպատակն է ոչնչացնել գերմանական վերջին դարերի պատմութիւնը և վերադարձնել նրան միջին դարերին:

Ի պատիւ գերմանական հասարակութեան պէտք է նկատել, որ կենտրոնական կուսակցութիւնը հրաժարվեց այդ ընկերութեանը մասնակցելուց: Դրա տեղ իշխան Բիսմարկի ողջունեց այդ ընկերութեանը մի հեռագրով, որտեղ նա յայտնում է, թէ ինքը համակրում է ընկերութեան նպատակներին և որ նա չի փոխի իր տնտեսական քաղաքականութիւնը: Իմանայու համար, թէ որքան ազդում են այդ բոլորը հասարակութեան վրա, առաջ կը բերեմ պարզամենտի անդամ սօցիալ-դեմոկրատ Արիստիստի խօսքերը. «Կայսերական կանցլերը, սասց նա, կարծում է, որ սօցիալ-դեմոկրատները նրա դրդանքի մէջ են: Իսկպէս գործը բուրովին հակապատկեր է ներկայացնում, որովհետեւ նա ինքը, պետական կանցլերը սօցիալ-դեմոկրատների ձեռքումն է:»

ՆԱՄԱԿ ԹԻՒՌԻՍԵՆՑ

Վ. Պօլսի, 30-ին մայիսի
 Մայիսի 24-ին կատարվեց Վ. Պօլսի հայոց ազգային ժողովի 21-երորդ տարեկարծը: Երբ ժամը սպաւորութիւն պիտի անէր մարդու վրա այդ խեղճապալ հանդիսի մէջ ներկայ գտնվելը, նոյնչափ հետաքրքիր էր հետեւեալ օրը այդ հանդիսավայրը այցելելը՝ Նախկին Կաղմալու համար թէ որչափ և ինչ տեսակ պատրաստութիւններ են եղել «կեցեցէներ» համար Վ. Պօլսի հայոց ազգային հիւանդանոցի պարտէզի մէջ: Ինձ առաջնորդում էր նոյն հիւանդանոցում մի քանի տարի շարունակ ազգին ծառայած զօրավոր ֆելդշերմայիստ, որի հետ հարկաւոր էր ի հարկէ նախ հիւանդանոցը տեսնել իր մանրամասնութիւնների մէջ, իսկ յետոյ կատարված

բարդանքներ ինձ այն քնքուշ սէրը, որը ես գնահատել չը կարողացայ, որը ես ուրբի տակ տեսնեի: Ես միայն քեզանից ներսումն եմ խնդրում: Դու պէտք է ներքես ինձ, խորհն, որպէս մի կը նսջ, որին մի ժամանակ սիրել ես: Դու պէտք է ներքես ինձ, որպէս աշակերտ մեր Տէր Զատու Քրիստոսի, որ ներսում էր աշխարհից արհամարհված անպատիւ կնիկներին, որոնք նրա ստիները թրջում էին իրանց արաստաբոյն և սրբում էին իրանց գլխի մազերով: Ես նրանից մէկն եմ: Երբ ինձ և կորցրել եմ քեզ մտածանք ինչ, սրով կարող էի գրաւել քո ուշադրութիւնը, գտնէ այդ երկիւստի համար, որ չարութիւնը, գտնէ այդ երկիւստի համար, որ մեր երկուստի սիրոյ պտուղն է. — Երբ ինձ:

Մինչ թշուառ կինը թափում էր արեղային առջնի իր սրտի դառն ցածրերը, նա գտնվում էր մի տեսակ տենդային խռովութեան մէջ, որ նրան մտածանալ էր տուել սիրած կնոջ ներկայութեան յիշեցում էր միայն բախտաւոր անցեալը: Եւ, կարծես, դարձեալ զգում էր նոյն սնունդ և անարատ ազգային հպարտութիւնը, զգում էր նրա ջերմ շնորհակցանք հրեշտակային սօսափունը, որ մի ժամանակ լցնում էր իր հոգին անհուն բերրութեամբ: Կարծես, լուսւ էր բաբախում ձայնը նոյն կուսական սրտի, որի մէջ իր սէրը մի ժամանակ այնքան ընդարձակ տեղ ուներ բռնած: Եւ, նստեցնելով իր մօտ չորած կը նսջ, և նրա դողալուն ձեռքը առնելով իր բաժնի մէջ, սասց խորին զգացմունքով:

— Իզուր ես կարծում, Սառա, որ դու այնքան յանցաւոր ես իմ առջն, որ հարկաւոր լինի քեզ ներողութիւն խնդրել: Դու ոչնչով մեծ դատար ցեալ եթէ դու ընկար, մեղաւորը ես եմ, որովհետեւ իմ մէջ չը կար այնքան ուժ և սրտի զօրութիւն, որ կարողանայի պահպանել քեզ

ուխանաների շօշափելի և զարդարուն մնացորդները: Կ. Պօլսի ազգային հիւանդանոցը իր գոյութեամբ պարտական է զխաւորապէս յայտնի ամբրա Գարուսի Յիզկիւնիսին, որը ոչ միայն առաջի ինիցիատիւն է ունեցել այդ գործի մէջ, այլ ևս նա է արեւ հիւանդանոցի կառուցման և մշտական եկամուտի համար անհղին դրամական զոհողութիւն, վասն որոյ մինչև հիմայ ես հիւանդանոցի դռնի առաջ դրած է Բեզկիւնիսի բաւական մեծ մարմարեղէն արձանը, որը շինված է «Մանդումէի» խմբագիր պ. Փանոսեանի ինիցիատիւնով, հիւանդանոցի մէջ իր անկախ անօրինութեան ժամանակ:

Բայց Գարուսի Բեզկիւնիսի կան մի քանի յիշատակներ նոյնպէս և որիչ անձանց, որոնց մէջ ամենից շատ աչքի ընկնողը դարձեալ նոյն «Մանդումէի» խմբագիր պ. Փանոսեանինն է, որի ինիցիատիւնով և յորդորանքով շինվել է հիւանդանոցի ընդարձակ պարսպի մէջ մի լայն և հաստատուն շէնք որը երկիւստի կողմերից գիշերօթիկ պահելու և ուսում տալու համար: Այդ որբերը, ըստ մեծի մասին, Վ. Պօլսի մէջ մտած հայ մշակների դաւաններն են, որոնց թիւը հասնում էր մօտ երկու հարիւրի: Բայց ուսումնարանից այդ պարսպի մէջ կան գտաղատ բաժանումներ նոյնպէս հայաստանցի անկարծեբերի և գաւառեակ կանանց համար, բարձր թող արած խելագարների և խելագարութեաների համար ես, որոնց մէջ որտի ցաւօք պատահեցի երբեմն յայտնի դերասանուհի Արուսեակին: Այսպիսով հիւանդանոցի մէջ ապահովմաների ընդհանուր թիւը հասնում էր վեց հարիւր հոգու, հետեւաբար այսպիսի մի հաստատութիւն մեծ կարեւորութիւն ունեցող մի բան է, մասնաւորապէս այսչափ բուռնակրկիտ են հիւանդանոցայտուղ, ծերանում և յատ անգամ սովամահ մեռնում մի կտոր հայր պակասութիւնից: Աւրեմն Վ. Պօլսի երեք հարիւր հազար հայ ազգայնակութիւնը եթէ ունէ հոգատարութեան և առանձին խնամքի արժան մի բան, այդ անկախ իր հիւանդանոցն է, որի համար այնչափ զոհողութիւններ է արել և հոգ տարել «խաւորամիտ», տղա, և անկիրթ» հին սերունդը: Մինչդեռ ինչ տարբերութիւն յայտնվեց այդ «խաւորամիտ», ամբարջական, կամ թէ ինչպէս սոքա ասում են եւրօպացրած ոճով, ազնուպետական սերունդի և այժման «զարգացած, լուսավիտ և լուսատու սերունդի մէջ աճա մի քանի շօշափելի ապացոյցներ:

Հիւանդանոցի բուր շէնքը այնչափ է հասցել ու քայքայվել, որ այցելուներին հարկաւոր է մեծ զգուշութիւն, որ կամ ոտի տակի յատակը

անկուտից: Դու մի որբ, անխորձ ազգիկ էիր, զուրկ հօր և մօր խնամակալութիւնից: Ես, որ պիտի նեցուկ լինէի և պահպանէի քեզ անկուտից, թողելի քեզ բախտի կամքին: Ես, որ պիտի առաջնորդէի քեզ կեանքի ուղիով ճանապարհի վրա, անհոգ գտնվեցայ և իմ անհոգութիւնով թուլ տուցի քեզ ընկնել մոլորութիւնների մէջ: Քո գեղեցկութիւնը բաւական ազգու գրաւական էր քո բոլոր մոլորութիւնների, իսկ ես այնքան անչորք գտնվեցայ, որ չը կարողացայ նախատեսել այդ: Ես զգացի իմ սխալը այն ժամանակ, երբ արդէն ուշ էր, երբ դու այլ ևս ինձ չէիր պատկանում... Բայց ինչու եմ սխալունք կոչում, դա մի անիրաւութիւն էր իմ կողմից, մի աններելի յանցանք էր, որը ես քաւելու համար մտայ վանքը: Կարծում էի՝ այնտեղ սրտի խաղաղութիւն և հոգու անդարտութիւն կը գրանւեմ: Կարծում էի այնտեղ երկնքի սէրը մտանալ կը տայ ինձ կնոջ սէրը: Բայց իզուր... Այնտեղ աւելի բարրութիւններ սրտիս մարած կայծերը: Այնտեղ աւելի սրտից տանջել ինձ կորած սէրը: Ամեն անգամ, երբ ծուռի լիցած Աստուածամօր պատկերի առջն, աչքերս զեպի վեր դարձնելով, ազօթում էի, նոյն բուգեում քո գեղեցկ պատկերն էր աչքերիս առջն երեսն զաւր... Ամեն անգամ, երբ կամենում էի սազմաններ երգել, քո երգն էր թուլում իմ բերանից... Վանքը չը կարողացաւ բուժել վիրաւորված սրտի վերքերը: Վանքը չը կարողացաւ տալ ինձ այն, որ խլված էր ինձանից...

— Իրանի թէ՛ առել կարողանայի, Սառա, երբանի թէ՛ զզվել կարողանայի... սասց արեղան ցաւալի ձայնով: — Իրանի թէ՛ դու մի մեծ վատութիւն արած լինելի ինձ, որով պատճառ տայիր քեզ տեսելու, որ մոռանայի, յաւիտեան մոռանայի քեզ: Բայց դու այդ շարեցիր, և եթէ դու ընկար վատութեան մէջ, ես կայ առաջին զլորողը... դու մեղաւոր չես... Սառան գրկեց նրան, և գեղեցկ կնոջ ջերմ շրթները սեղմեցան արեղային երեսի վրա: Եւ, որպէս մի կախարհող հպաւորութիւնից խորշուով, բացակայեց:

— Սառա, մի համբուրիր ինձ, հայտնիր, նախատիր ինձ, Սառա, անէճքներ թափիր իմ գլխին, որ ես բարկանամ, որ ես կարողութիւն ստանամ քեզ չը սիրելու: Այդ եմ ցանկանում ես և այդ կը հանգստացնէ ինձ: Տուր ինձ մի պատճառ քեզ առելու, — դրա մէջն է իմ բախտաւորութիւնը... — Ի՞նչու, հարցրեց Սառան:

չը փուլ գայ ու վայր խորտակէ իրան կամ կախ ընկած առատաղը չընկնէ ու ջախջախէ գլուխը: Զառամեալ ծերունիների անկողնները այնչափ էին մաշված ու քրքրված, որ ոչ միայն չէին կարող նպաստել խեղճ ուժաւորների կեանքին մի աւելորդ օր ես աղաւթ, այլ ընդհակառակը ամենաառողջ մարդուն կարող էին հիւանդացնել ու գերեզման տանել: Գժտոտան բաժնի մէջ մարդ էլ չէր կարող սիրտը պահել խոնաւութեան, ժանտահոտութեան ու հնութեան ստակալի հօտից: Աստուծոտանի մէջ թշուառ հայաստանցի որբերի դրութիւնը աննկարագրելի էր — որբ բոբիկ, նիհար, թարշամած, տիւր, կիսամրկ, մեծք գաւնք նոցա ճաշի ժամանակ: Կսկիծ ու կրակ էր թափվում մարդու սրտի վրա — մի պատառ, քարի պէս կարծր պանիր և մի կտոր սև հաց էր իւրաքանչիւրի առաջ: Խեղճերի հայեացքը այնքան աղերսական էր, որ հազիւ կարողացանք յուզմունքներս զսպել և «Աստուած լինի ձեզ օգնողը, խեղճ հայ մանուկներ» արտասանել:

Բայց ո՞վ է մեղաւոր այս թշուառութեան մէջ, Ներսէսը — բնաւ կրեք, նրա թուքն էլ չորացել է ազգի պարտաւորութիւնը իրան յիշեցնելուց: Հոգարարձութիւնը — նոյնպէս ոչ, որովհետեւ ամենքին յայտնի է, որ այդ խեղճ հոգարարձութիւնը իւրաքանչիւր տարի իր սեփական գրգռանից հազարներ է տալիս Ներսէսից իրան խղճին յանձնած պարտքը կատարելու համար: Էլ ո՞վ միայն ուրեմն — միայն այն պոռոտախոս մրտադները, ճառ խօսողները, լամբարին ու վիկար շրջո կարգացանները, որոնց թիւը տասը հազարի էր հասել տարեկարձի օրը: Այդ կրտսւորվածները այդ դատարկախոս տօնակարները, որոնց մէջ առաջի տեղն էին բռնում այլ և այլ իմաստակ ինքնակոչ վիպասաններ, իննի մարգարեներ, ամբողջ օրը թիղացնելով օլը վեցցէներով և խմբքների լճակ շինելով ճանդիւղայրը, մի վայրկեան անգամ չը մտածեցին հիւանդանոցի պարսպից ներս նայելու տեսնել հինգ հարիւր կենդանի նահատակների վիճակը, նոցա խմած դառն բաժինը: Եւ որչափ անդթութիւն պարտէզի մէջ ամբողջ երկու շաբաթ հիւանդանոցի հաշուով պատրաստութիւններ են տեսնվել խեղճ փոքրիկ որբերի մասնակցութեամբ այն յուսով, որ տարեկարձի օրը մի քանի հազար վեցցէ՝ ասողներից գտնէ մի քանիսը կը յիշեն որ իրանց գաւարձութեամբ պարտական են ազգային հիւանդանոցին, որին կը շտապեն ձեռք կտակաւել, մինչդեռ մինչև երկուց դեռահարական հրճուանքներ կատարելով, տասը հազար մարդից ոչ մինը չը մտածեց սովալուկ որբերի և նոթիութիւնից ուժակտուր

ազատութեան գործը, ևս հոգով և մարմնով նուիրվեցայ նրան: Նրա մէջ գտնում էի և իմ փրկութիւնը, որովհետեւ այդ գործը զբաղեցնում էր ինձ, քեզ վրա մտածելու ժամանակ չէր տալիս: Իսկ երբ ձեռնարկվեցաւ այդ բերդի պաշարմանը, երբ խնայեց, թէ ինչ վտանգ է սպառնում այստեղի բնիկներին, — ես կրկին մտաբերեցի քեզ, Սառա, մտաբերեցի իմ դաւանկին և աճապարեցի օգնութեան հասնել:

Վերջին խօսքերի միջոցին Սառան ընկաւ աքերայի կուրծքի վրա, և իր գլուխը թաղցնելով նրա գրկի մէջ, սկսեց լաց լինել: Արտասուքի միջոց լսելի էին լինում այդ խօսքերը. «Եւ դու չէ մոռացել անտառակին... նա չէ զզվում, չէ ատում նրան... ան, ես բախտաւոր եմ, շատ բախտաւոր»...

— Իրանի թէ՛ առել կարողանայի, Սառա, երբանի թէ՛ զզվել կարողանայի... սասց արեղան ցաւալի ձայնով: — Իրանի թէ՛ դու մի մեծ վատութիւն արած լինելի ինձ, որով պատճառ տայիր քեզ տեսելու, որ մոռանայի, յաւիտեան մոռանայի քեզ: Բայց դու այդ շարեցիր, և եթէ դու ընկար վատութեան մէջ, ես կայ առաջին զլորողը... դու մեղաւոր չես... Սառան գրկեց նրան, և գեղեցկ կնոջ ջերմ շրթները սեղմեցան արեղային երեսի վրա: Եւ, որպէս մի կախարհող հպաւորութիւնից խորշուով, բացակայեց:

— Սառա, մի համբուրիր ինձ, հայտնիր, նախատիր ինձ, Սառա, անէճքներ թափիր իմ գլխին, որ ես բարկանամ, որ ես կարողութիւն ստանամ քեզ չը սիրելու: Այդ եմ ցանկանում ես և այդ կը հանգստացնէ ինձ: Տուր ինձ մի պատճառ քեզ առելու, — դրա մէջն է իմ բախտաւորութիւնը... — Ի՞նչու, հարցրեց Սառան:

հիւանդանոցի վրա և այսպիսով 24-ին մայիսի հիւանդանոցի հոգարարձութեան վրա միայն մօտ 800 բուրջ բաց այն ծախքերի մէջ, որ արել էր հոգարարձութիւնը հանդիսակատարների համար: Ահա այսպիսի մարդիկներ են ուղում այժմ Հայաստանի լուսաւորել զանազան մեծանուն ընկերութիւնների միջոցով: Ասեցէք խընդրեմ՝ մի մարդ, որը ի՞նչ աչքի առաջ գրած պարտաւորութեան այսպէս է վերաբերվում, ինչ կարող է նա հազարաւոր վերստ անելու հետեւ իրան մի անյայտ երկրի մէջ մի բան կատարել: Այս ամենից հետեւում է այն, ինչ կրկնում էր Մշակը այսչափ տարի, այսինքն ով ուղում է մի մարդավարի գործ կատարել հայրենեաց համար առանց ուրիշների և իրան խորհուր, նա պէտք է գնայ Հայաստան, այլ ոչ թէ Բօսֆորի ակերից ձգտէ յայտագիրերով ու ճառերով լուսաւորել նրան:

Որովհետեւ մշակականների անխնայ ճշմարտախօսութիւնը աչք է հանում և «ճայրայեղ պետի միջոց է (չարտօնութիւն) համարվում, վառն որոյ բոլոր վերոյիշեալ տեսանքներս մէջ ես ոչինչ չը խօսեցի այստեղի լրագիրներում, սակայն այսչափ օգտիրիստ մարդիկ անգամ ինչպէս կ' պօսեցիք են, չուղեցին տեսնել իրանց լրագիրները միայն գովասանքներով լրցրած ազգային ժողովի տարեկարձի մասին, վասն որոյ ընդհանուր արտահայտութիւնը արտադրեց մի քանի խիստ յօգուածներ, որոնցից մինը ներփակած ուղարկում եմ ձեզ արտատպելու համար, որ այդտեղի բնիկները տեսնեն թէ՛ որչափ իրաւունք ունէր Մշակը այսչափ տարի յարձակվել սոցա վրա: Ի՞նչ կարող է սեփականեալ այսպիսի մարդիկներին եթէ ոչ պակասութիւնները իրանց երեսին ամբողջութեամբ ասելը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌՍԿԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
 Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 8 յունիսի Պետական բանկի 5⁰/₁₀ տոմսով առաջին շրջանի արժէ 96 ռ. 25¹/₂ կ., երկրորդ 94 ռ. 50 կ., երրորդ 94 ռ. 50¹/₂ կ., չորրորդ 94 ռ. 50 կ., ներքին 5⁰/₁₀ առաջին փոխառութեան տոմսով արժէ 225 ռ. 50 կ., երկրորդ 218 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսով արժէ 92 ռ. 75¹/₂ կ., երկրորդ 92 ռ. 75¹/₂ կ., սակի 8 ռ. 9 կ.: Իրեւան 1 բուրջ 1 լեռնօնի վրա արժէ 24,37 պէնս, սուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 208 մարկ 87 պֆ., Փարիզի վրա արժէ 257 Ֆրանկ: Բօրայի տրամադրութիւնը հանդիսա է:

Խմբագիր — Գրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

— Իմ մէջ դեռ մնացել է կամքի և սրտի նայն թուլութիւնը, որ ունէի առաջ, պատասխանեց արեղան վրդովված կերպով: — Ես այնքան ուժ չունեմ, որ թողնեմ վանքը և քո գրկում հանգստութիւն ու ապաստան գտնեմ: Ես մի թշուառ արարած եմ, զուրկ մարդկային բոլոր իրաւունքներից...

— Ես այդ զոհողութիւնը քեզանից չեմ պահանջում, խորհն, և իրաւունք էլ չունեմ պահանջելու: Դու միայն սիրիր ինձ, խորհն, քո առաջին սիրոյ մի նշանն անգամ բաւական է, որ սրբէ և մաքրէ իմ կեղտերը... Քո սէրը միայն կարող է ուղղել ինձ, կանգնեցնել հաստատ ճանապարհի վրա: Կորցնելով քո սէրը, ես աւելի յօժարութեամբ նետվեցայ բարոյական ցեխի մէջ, որպէս մի թշուառական, որ պատահած անբախտութիւնից յետոյ, սրտի վշտերը մոռանալու համար, անձատուր է լինում արեղայութեան, և օրըստօրէ աւելի ու աւելի թուաւորում է իր մարմինը և հոգին: Խորհն, սիրիր ինձ, և այդ կը փրկէ ինձ...

— Եր սիրեմ... պատասխանեց արեղան և նրա խօսքը ընդհատվեցաւ, որովհետեւ այդ միջոցին դրոյց լսելի եղաւ տէր Աւետիքի ձայնը, որ կոչում էր նրան:

Նրա ընկերները, վերջացնելով իրանց խորհուրդը, կանգնած էին բակում: Արեղան միայնա նրանց հետ, և դուրս գալով Սառայի սնից, անհետացան բերդի միջին փողոցների մէջ: